ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/42

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2524-19 գրությամբ «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 06952546/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 12.02.2019թ. թիվ 01/61-2217 գրության հիման վրա, 19.02.2019թ. նախաձեռնել է «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը 12.02.2019թ. թիվ 01/61-2217 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/60» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2019 թվականի թիվ 3 որոշմամբ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Երևանի քաղաքապետարանը, օրենքով սահմանված կարգով, էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ և առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովը, գնահատելով Ընկերության կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ Ընկերության կողմից տրամադրված գնման առարկայի տեխնիկական բնութագրում ներառված ծաղկեպսակում և ծաղկային կոմպոզիցիայում թարմ ծաղիկների փոխարեն նշվել են արհեստական ծաղիկներ:

ՀՀ կառավարության 18 մայիսի 2017 թվականի «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» 534-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 23-րդ կետի համաձայն՝ Ընկերությանն առաջարկվել է ծանուցումն ուղարկելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում տրամադրվել է նույն բովանդակությամբ գնման առարկայի տեխնիկական բնութագիր, Կարգի 24-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների համաձայն գնահատող

հանձնաժողովի որոշմամբ՝ Ընկերության ներկայացրած հայտը մերժվել է, և վերը նշված չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ են հայտարարվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցները»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Վաչագան Մեժունցը:

3. «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը դիմել է «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2524-19 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Վլադիմիր Գևորգյանը:

4. ՍՑ-ԷՍ-2019/42 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2524-19 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի 12.02.2019թ. թիվ 01/61-2217 գրությունը, «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/60» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/60» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.01.2019թ. նիստի թիվ 3, 31.01.2019թ. նիստի թիվ 4, 04.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/60»

ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն՝ Աճուրդի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Աճուրդի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ Աճուրդի՝

- 1-ին չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «ծաղկային կոմպոզիցիաներ» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները. «Ծաղկեպսակները պատրաստված լինեն եռոտանի /բարձրությունը՝ 1.6մ/, պենոպլաստի հիմքով, հետևի մասը ամբողջությամբ պատած բնական կանաչով, 120սմ տրամագծով: Պատրաստման համար օգտագործվի 550-650 հատ մեխակ, խիտ դասավորությամբ, գլխիկը մոտ 2-4 սմ, ռուսկուս 120 հատ, 3-4 կապ պտեր: Պատվերները իրականացվում են հեռախոսազանգի միջոցով՝ ձեռքբերման անհրաժեշտության վերջնական հստակեցումից անմիջապես հետո: Առաքումը ՀՀ տարածքում, պատվիրատուի նշված հասցեով ապահովում է Վաճառողը: Օպերատիվ պատվերների դեպքում Երևան քաղաքում առաքումը պետք է ապահովվի առավելագույնը 25 րոպեի ընթացքում: Ծաղիկները պետք է լինեն միշտ թարմ: Պատվիրատուի հետ համաձայնեցնելով հնարավոր է նշված ծաղիկները փոխարինել համարժեքով /կախված տարվա եղանակից»:

- 2-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «ծաղկային կոմպոզիցիաներ» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները. «Փնջի կամ զամբյուղի տեսքով, պատրաստման համար օգտագործվեն հոլանդական վարդեր կամ համարժեքը /14-15 հատ/ 80-95 սմ բարձրությամբ, լիլիաներ /4-6 հատ/, լիսիանտուսներ, քրիզանտեմներ կամ աստրոմերիաներ /6-8 կապ/, գիպսոֆիլիա հոլանդական կամ համարժեքը /3 ճյուղ/, կանաչ տերևներ /արեկա, ցեկաս, էվկալիպտ/: Ձևավորված ջրակայուն փաթեթավորման համար նախատեսված որակյալ թղթերով: Պատվերները իրականացվում են հեռախոսազանգի միջոցով՝ ձեռքբերման անհրաժեշտության վերջնական հստակեցումից անմիջապես հետո: Առաքումը ՀՀ տարածքում, պատվիրատուի նշված հասցեով ապահովում է Վաճառողը: Օպերատիվ պատվերների դեպքում Երևան քաղաքում առաքումը պետք է ապահովվի առավելագույնը

25 որպեի ընթացքում: Ծաղիկները պետք է լինեն միշտ թարմ: Պատվիրատուի հետ համաձայնեցնելով հնարավոր է նշված ծաղիկները փոխարինել համարժեքով /կախված տարվա եղանակից/»:

- 3-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «ծաղկային կոմպոզիցիաներ» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները. «Փնջի կամ զամբյուղի տեսքով, պատրաստման համար օգտագործվեն հոլանդական վարդեր կամ համարժեքը /7-11 հատ/ 80-95 սմ բարձրությամբ, լիլիաներ /2-3 հատ/, լիսիանտուսներ, քրիզանտեմներ կամ աստրոմերիաներ /3-4 կապ/, գիպսոֆիլիա հոլանդական կամ համարժեքը /1.5 ճյուղ/, կանաչ տերևներ /արեկա, ցեկաս, էվկալիպտ/: Ձևավորված ջրակայուն փաթեթավորման համար նախատեսված որակյալ թղթերով: Պատվերները իրականացվում են հեռախոսազանգի միջոցով՝ ձեռքբերման անհրաժեշտության վերջնական հստակեցումից անմիջապես հետո: Առաքումը ՀՀ տարածքում, պատվիրատուի նշված հասցեով ապահովում է Վաճառողը: Օպերատիվ պատվերների դեպքում Երևան քաղաքում առաքումը պետք է ապահովվի առավելագույնը 25 որպեի ընթացքում: Ծաղիկները պետք է լինեն միշտ թարմ: Պատվիրատուի հետ համաձայնեցնելով հնարավոր է նշված ծաղիկները փոխարինել համարժեքով /կախված տարվա եղանակից/»:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 4-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/60» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/60» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովի 21.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 3.3 կետի համաձայն՝ Աճուրդի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել Հավելված 3-ով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հետևյալ բովանդակությամբ.

«1-ին չափաբաժին. Ծաղկեպսակները պատրաստված կլինեն եռոտանի /բարձրությունը՝ 1.6մ/, 2 սմ հաստությամբ պլաստմասից, պենոպլաստի հիմքով, հետևի մասն ամբողջությամբ պատված բնական կանաչով, 120 սմ տրամագծով: Պատրաստման համար պետք է օգտագործվի 550-650 հատ արհեստական մեխակ, խիտ դասավորությամբ, գլխիկը մոտ 2-4 սմ, արհեստական ռուսկուս 120 հատ, 3-4 կապ պտեր: Պատվերներն իրականացվում են հեռախոսազանգի միջոցով՝ ձեռքբերման անհրաժեշտության վերջնական հստակեցումից անմիջապես հետո: Առաքումը ՀՀ տարածքում, պատվիրատուի նշված հասցեով ապահովում է Վաճառողը՝ 1 կմ 300 դրամ: Օպերատիվ պատվերների դեպքում Երևան քաղաքում առաքումը պետք է ապահովվի առավելագույնը 25 րոպեի ընթացքում: Ծաղիկները պետք է լինեն միշտ թարմ տեսքի: Պատվիրատուի հետ համաձայնեցնելով հնարավոր է նշված ծաղիկները փոխարինել համարժեքով /կախված տարվա եղանակից/:

2-րդ չափաբաժին. Փնջի կամ զամբյուղի տեսքով, պատրաստման համար կօգտագործվեն հոլանդական արհեստական վարդեր կամ համարժեքը /14-15 հատ/ 80-95 սմ բարձրությամբ, 2 սմ տրամագիծ ունեցող գլխիկով, արհեստական լիլիաներ /4-6 հատ/, արհեստական լիսիանտուսներ, արհեստական քրիզանտեմներ կամ արհեստական աստրոմերիաներ /6-8 կապ/, արհեստական գիպսոֆիլիա հոլանդական կամ համարժեքը /3 ճյուղ/, կանաչ արհեստական տերևներ /արեկա, ցեկաս, էվկալիպտ/: Ձևավորված ջրակայուն փաթեթավորման համար նախատեսված որակյալ թղթերով: Պատվերները իրականացվում են հեռախոսազանգի միջոցով՝ ձեռքբերման անհրաժեշտության վերջնական հստակեցումից անմիջապես հետո: Առաքումը ՀՀ տարածքում, պատվիրատուի նշված հասցեով ապահովում է Վաճառողը՝ 1 կմ 300 դրամ: Օպերատիվ

պատվերների դեպքում Երևան քաղաքում առաքումը պետք է ապահովվի առավելագույնը 25 րոպեի ընթացքում: Ծաղիկները պետք է լինեն միշտ թարմ տեսքի: Պատվիրատուի հետ համաձայնեցնելով հնարավոր է նշված ծաղիկները փոխարինել համարժեքով /կախված տարվա եղանակից/:

3-րդ չափաբաժին. Փնջի կամ զամբյուղի տեսքով, պատրաստման համար կօգտագործվեն հոլանդական արհեստական վարդեր կամ համարժեքը /7-11 հատ/ 80-95 սմ բարձրությամբ, 2 սմ տրամագիծ ունեցող գլխիկով, արհեստական լիլիաներ /2-3 հատ/, արհեստական լիսիանտուսներ, արհեստական քրիզանտեմներ կամ արհեստական աստրոմերիաներ /3-4 կապ/, արհեստական գիպսոֆիլիա հոլանդական կամ համարժեքը /1,5 ճյուղ/, արհեստական կանաչ տերևներ /արեկա, ցեկաս, էվկալիպտ/: Ձևավորված ջրակայուն փաթեթավորման համար նախատեսված որակյալ թղթերով: Պատվերները իրականացվում են հեռախոսազանգի միջոցով՝ ձեռքբերման անհրաժեշտության վերջնական հստակեցումից անմիջապես հետո: Առաքումը ՀՀ տարածքում, պատվիրատուի նշված հասցեով ապահովում է Վաճառողը՝ 1 կմ 300 դրամ: Օպերատիվ պատվերների դեպքում Երևան քաղաքում առաքումը պետք է ապահովվի առավելագույնը 25 րոպեի ընթացքում: Ծաղիկները պետք է լինեն միշտ թարմ տեսքի: Պատվիրատուի հետ համաձայնեցնելով հնարավոր է նշված ծաղիկները փոխարինել համարժեքով /կախված տարվա եղանակից/»:

Այնուհետև, 31.01.2018թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության՝

- 2-րդ կետով Հանձնաժողովն ընդունել է ի գիտություն, որ «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր:

- 2.2 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ. ««ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես, «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծաղկեպսակում և ծաղկային կոմպոզիցիայում ծաղիկների բնական լինելու պահանջի նախատեսված չլինելու հետ, չի համապատասխանում իրականությանը: Պատվիրատուի կողմից ներկայացված համապատասխան տեխնիկական բնութագրում նշված է, որ ծաղիկները պետք է լինեն միշտ թարմ, իսկ մասնակցի ներկայացված

տեխնիկական բնութագրում նշվել է թարմ տեսքի: Թարմ լինում են միայն բնական ծաղիները, իսկ Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում «թարմ տեսք» ձևակերպում չկա: Ինչ վերաբերում է առաքմանը, ապա մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է, որ առաքումը ՀՀ տարածքում պատվիրատուի նշված հասցեով ապահովում է վաճառողը, ինչը նշանակում է, որ մրցույթում հաղթող կազմակերպությունը պետք է ապահովի առաքումը: Եթե առաքման ծառայությունը դիտարկվեր որպես առանձին ծառայություն, ապա որևէ կերպ կնշվեր մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում»:

- 3-րդ կետով Հանձնաժողովն առաջարկել է «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի կողմից 31.01.2019թ. ժամը 11:57 www.e-auction.am համակարգի միջոցով Ընկերությանն ուղարկվել է շտկման պահանջ՝ հետևյալ բովանդակությամբ. «Դուք դիմել եք «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/60» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնժողովն ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին Ձեր համապատասխանությունը հավաստոցղ փաստաթղթերը, որոնցում նկատվել են հետևյալ թերությունները. Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում մեր կողմից սահմանված հրավերի պահանջներին: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները:

04.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում տրամադրվել է նույն բովանդակությամբ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, ուստի Հանձնաժողովը որոշեց «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընթացակարգի քննության շրջանակներում Բողոքներ քննող անձի կողմից www.gnumner.am համացանցային կայքի հրապարակումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Պատվիրատուի «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/60» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 31.01.2018թ. կայացած հայտերի գնահատման նիստի թիվ 4

արձանագրությունը վերը նշված կայքում հրապարակվել է ոչ թե նիստին հաջորդող աշխատանքային օրը՝ 01.02.2019թ., այլ՝ 05.02.209թ. ժամը 11:39:36, այսինքն, նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, Ընկերության հայտը մերժելու որոշման՝ 04.02.2019թ. թիվ 5 նիստի արձանագրությունը Պատվիրատուի կողմից նշված կայքում հրապարակվել է նույն օրը՝ 05.02.209թ. ժամը 11:40:15:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 46-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ առաջին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ ապրանքների գնման դեպքում՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Նույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին:

- 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/60» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

- 7.10 կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.
- 7.12 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

- 7.16 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

- 7.17 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ

զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

•34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/60» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի Աճուրդի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

- 31.01.2018թ. կայացած թիվ 4 նիստի արձանագրությամբ Հանձնաժողովի կողմից «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ և առաջարկվել է ծանուցումն ուղարկելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- Հանձնաժողովի կողմից www.e-auction.am համակարգի միջոցով 31.01.2019թ. ժամը 11:57 Ընկերությանն ուղարկվել է ծանուցում՝ շտկման պահանջ: Ընդ որում, հիշյալ ծանուցման բովանդակությունը չի պարունակել Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների որևէ նկարագրություն:

- 04.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում տրամադրվել է նույն բովանդակությամբ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, և որոշել է վերջինիս հայտը մերժել:

- Աճուրդի գնահատող հանձնաժողովի 31.01.2018թ. կայացած հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրությունը www.gnumner.am կայքում հրապարակվել է ոչ թե նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ 01.02.2019թ., այլ՝ 05.02.209թ. ժամը 11:39:36, այսինքն, նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կողմից www.e-auction.am համակարգի միջոցով 31.01.2019թ. Ընկերությանն ուղարկված շտկման պահանջի ծանուցումը չի պարունակել Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների սպառիչ և մանրամասն նկարագրություն, իսկ 31.01.2018թ. կայացած հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրությունը

www.gnumner.am կայքում հրապարակվել է միայն 05.02.209թ., այսինքն, ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, հետևաբար, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից Ընկերությանը օբյեկտիվորեն հնարավորություն չի տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Հրավերով սահմանված ժամկետում կատարել առաջարկվող ապրանքի բնութագրում առկա անհամապատասխանությունների շտկում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.02.2019թ. թիվ 01.1/26-3/2524-19 գրությամբ «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 06952546/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ